

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(Կիրակի, 3 հունիս 1990 թ., Հոգեգալուստ)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Այսօր երկնայինքն ուրախացան ընդ երկրաւորաց նորոգման, քանզի նորոգողն էից հոգին էջ ի Ս. վերնատունն, որով նորոգեցան դասք առաքելոց»:

«Այսօր երկնայինները ուրախացան երկրավորների նորոգմամբ, որովհետև էությունը նորոգող հոգին իջավ սուրբ վերնատանը, նրանով նորոգվեցին առաքյալների խմբերը»:

Այսօր Հոգեգալուստ է, Պենտեկոստե: Զատկին հաջորդող հիսուն օրերը ահավասիկ այսօր իրենց լրմանն են հասել: Մեր Տերը և Փրկիչը՝ Հիսուս Քրիստոս, հիսուն օր առաջ մեռելներից հարություն առավ, մահվանից ի կյանք փոխադրվեց և մահվան դեմ տարած Իր փառավոր հաղթանակով մեզ ապացուցեց, որ մահը կյանքի վերջին սահմանը չէ, այլ՝ մի նոր կյանքի, հավիտենական, անանցութական կյանքի սկիզբ է:

Իր հարությունից հետո, մեր Տերը քառասուն օր իր աշակերտների հետ անցկացրեց՝ ապացուցելով, որ ինքն էր հարուցյալը, և այդպիսով աշակերտների խախտված հավատը վերանորոգեց: Ապա, քառասուն օրերի ավարտին, իր աշակերտների հետ բարձրացավ Համբարձման լեռը և այնտեղ իր վերջին պատգամները տալուց հետո՝ երկինք բարձրացավ: Համբարձումից առաջ մեր Տիրոջ վերջին պատգամը հետևյալն էր. «Նստարուք ի քաղաքիդ յԵրուսաղէմ, մինչև զգենուցուք զօրութիւն ի բարձանց» խոսքերը: «Մնացեք Երուսաղեմ քաղաքում, մինչև բարձունքներից զորություն ստանաք»:

Հիսուսի աշակերտները համբարձումից հետո տասը օր շարունակ, ըստ տերունական պատվիրանի, միաբան և միախոհ հավաքվում էին Երուսաղեմ քաղաքում՝ վերնատանը, այնտեղ ոգեկոչում հիշատակը իրենց վարդապետի, սաղմոսներ քաղում, աղոթքներ ասում և հաց ու գինի ճաշակում ու ըմպում ի հիշատակ վերջին ընթրիքի, երբ Հիսուս հացն օրհնելուց և բաժանելուց, ապա գինին օրհնելուց և ըմպելուց հետո ասել էր. «Զայս արարէք վասն իմոյ յիշատակի»: Այսպիսով նա հիմնել էր Ս. Հաղորդության սրբազան խորհուրդը:

Երբ Պենտեկոստեի օրերը լրացան, առաքյալները համախումբ նստել

ազնիվ նպատակի իրականացման հանապարհի սկզբին այդ նպատակը հետապնդող մարդիկ պետք է լինեն միասնական, համախոհ և միակամ: Որևէ կոտորակում պատճառ կդառնա այդ ազնիվ նպատակի մասնակի կամ ամբողջական ձախողման:

Բագրատունյաց իշխանության կործանումից հետո, 11-րդ դարի սկզբին, հայ ժողովուրդը Արևելյան Հայաստանում շուրջ ինը հարյուր տարի կորցրեց իր պետականությունը: Այդ ինը հարյուր տարիների ընթացքում նա բազմաթիվ ոտխների արշավանքներին ենթարկվեց՝ անընդհատ կոտորակվելով: Իրենց հայրենի երկիրը թողեցին ու հեռացան հարյուր հազարավոր հայեր, հաստատվելով Արևելյան Եվրոպայի տարբեր, համեմատաբար խաղաղ անկյուններում, այնտեղ փորձեցին ստեղծել մշակույթ ու հայրենի տան ավանդական ջերմությունը: Բաժանման ու կոտորակման պատճառով բոլորն էլ ձուլվեցին ու անհետացան: Դրան հակառակ, երկրում մնացողները, հակառակ անընդմեջ բազում հալածանքների ու կեղեքումների իշխող ցեղերի և ժողովուրդների կողմից, կարողացան ազատագրական պայքարներ կազմակերպել և, իբրև արդյունք դրան, 1918 թվականին, հայ ժողովրդի պատմության ամենադառն և փորձություններով լեցուն պահին, Սարդարապատում, Բաշ Ապարանում և Ղարաքիլիսայում իրենց ցուցաբերած քաջության շնորհիվ ու նաև անսպասելի քաղաքական հանգամանքների բերումով կարողացան վերահաստատել հայկական պետականությունը: Ահա այդ բոլորը արդյունք էր միասնականության, համագործակցության և համախոհության:

Փառք ենք տալիս Աստծուն, որ այսօր հայ ժողովուրդը ի Հայաստան և ի ափյուռս աշխարհի ունի իր մայր հայրենիքը, իր քաջ որդիների արյունից ծլած գեղեցիկ մի ծաղիկ: Սակայն հարկավոր է, որ քաղաքական վերիվայրումների այս դժնդակ և բախտորոշ օրերին կարողանանք մեր երկիրը պահել ապահով և անվտանգ: Այս օրերին ավելի քան երբեք կարիքն ունենք մենք միության, համագործակցության, միասնականության և սրտակցության: Թուլամներ ու պատեհապաշտներ չպետք է պղտորեն մեր ժողովրդի մաքուր զգացումները և հայրենասիրական ոգին: Նորելուկ հերոսներ չպետք է վրդովեն մեր երկրի ներքին խաղաղությունը: Հայրենասիրական ու մարդասիրական նույն սկզբունքներից մղված՝ անհրաժեշտ է, որ մենք դիմագրավենք քաղաքական ու տնտեսական բոլոր դժվարությունները՝ հեռու մնալով ծայրահեղ արարքներից, կործանարար մոլորություններից:

Սիրելի հավատացյալներ, որպեսզի կարողանանք մեր հայրենի սրբազան հողը մեր ձեռքում ամուր պահել, որպեսզի մեր ոտխներին մեր սխալներով չուրախացնենք, և որպեսզի ի զուր անմեղ հայի արյուն չթափվի ոչ մեկ ժամանակ և ոչ մեկ տեղ, անհրաժեշտ է, որ լինենք միասնական, համախոհ և միասիրտ: Հայրենիքը նրան է պատկանում, ով այն սիրում է մաքուր սրտով, ով խարդախ ու կեղեքող չէ, ով սիրում է իր հայրենակցին ինչպես իր եղբորը: Հայրենիքը դու ես, ես եմ, նա է, բացի հող լինելուց:

Մաղթում եմ, որ Հոգեգալստյան այս օրը լինի հոգեպես և ներքուստ աստվածային շնորհներով զարդարվելու օր, մեզ համար լինի նաև գիտակցության օր, որպեսզի լինենք սիրով ու միաբան, միմյանց հանդեպ ցույց տանք կարեկցանք ու հարգանք, բոլորանվեր սրտով սիրենք մեր սուրբ հայրենիքը և մտահոգվենք նրա շուտափույթ վերականգնումով ու ծաղկումով:

Քիչ հետո հոգեհանգստյան մասնավոր պաշտոն ենք կատարելու մայիսի 27-ին Երևանում զոհված մեր եղբայրների և քույրերի հոգիների խաղաղության համար: Թող Տերը քաղցրությամբ ընդունի նրանց հոգիները և մխիթարություն պարգևի նրանց հարազատներին: Նրանք հավետ կապրեն մեր ժողովրդի գիտակցության մեջ:

«Օրհնութիւն ի բարձունս, եղողին ի Հօրէ Հոգւոյն Սրբոյ, որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւ և հրաւիրեցին զերկինս ի յերկիր». ամեն: